

ԴԱՂ-ՄՈՒՐԱԴ-ԾԱՀ

Փամանակով Խաթամ-Շահար քաղաք գլնի, էտե նստած գլնի Դաղ-Մուրադ-շահ թագաւորը, էտ թագաւորին ունէր քառսուն հազար փահլէվան: Էտ քառսուն հազար փահլէվանի զըլխաւորն ին Այարէ-շէր-փանջ և Ֆէրըղ փահլէվանները: Օրերից մէ օր Այարէ-շէր-փանջ փահլէվանը գըջայ Դաղ-Մուրադ-շահի կուշտը, կասայ, թէ՛ թագաւորը սաղ հլնի, յարի խաղինի բալնըսները տու ընծի, ես օղորմութեն ցրուեմ, անօթին՝ կշարցնեմ, տգլողը՝ խաբցնեմ, ծառաւը՝ խմցնեմ, բալբի թէ Աստծու սիրտը քաղցրնայ, քե մէ տղայ տայ: Թագաւորը կասայ. Համէցէք. խաղինի բալնըսներ քեզի, ինչ գիտաս՝ էնենց արա: Այարէ-շար-փանջ փահլէվանը կառնի օղորմութենը ցրուել: Անօթին՝ կկշտըցնայ, ծառաւը՝ կխմցնայ, տգլողը՝ կխաբցնայ: Էտուց յետ՝ Դաղ-Մուրադ-շահ թագաւորի կնիկը կմնայ ճոժով: Ինն ամիս, ինն օր, իննը սհաթը կթըմըմի, թագուհին չաքը կզանայ գէտին, մէ տղայ կըէրայ—մէ մուսուլ ա, մէ մաղանդարայ ա, մէ գոմշի ձազ ա. բոյի յէրգնեքը՝ էրկու շէնք, ու ճակտի լէնքը՝ էրկու թիգ: Տղի աչ ձեռը խփուկ էր: Էտոնց մէջը աղաթ կար, որ տատմէրները կտանին, կքցին էրէխին բարէկըմների գիրկը, որ փարայ դին տատմօրը: Էտէնց գրկերը քցելով՝ կտանայ չուր թագաւորի կուշտը: Որ կքցայ թագաւորի գիրկը, ընդե թագաւորը կաէնայ, որ սղի աչ ձեռը խփուկ ա: Իմալ որ ձեռ կտայ՝ սղի ձեռը կբացուի: Տատմօրը կասայ. Անունն ինչ էք գնում: Ի՞մ սղի անունը գրուկ ա, կասայ.—Ղահրամանի-ղաթըլ ա, որ արունը հստու ձեռի՝ մէջը լեռթուեր ա՝ էսի էնենց զուլաթով զըլնի, որ սաղ աշխարը էս արնի պէս կքամայ:

Էտու անունը կմնայ Ղահրամանի-ղաթըլ: Էտ տղէն կըէդնայ, գլնի չուէքի խինգ տարէկան: Սովորութեն էր, որ օրէն

մէկը տանում էր տղին ման տալու: Դօրը (հերթը) հնգաւ էն փահլէվանին, որ Աստծուց խնթըրվէր էր, Աստուած տուէր էր: Տարաւ ման տալու բախչի մէջը, կայնցրեց յաղբրի կուշտը, ա-սաւ. դու կայնի էստե, Ղահրամանի-Ղաթըլ ջան, ես էթամ քե-խամար ծաղիկներ բէրեմ: Մէ յուրիշ քաղաք էլ կար, որ դեւերի մասկեամ ին ասում. էտոնք յիմցեր ին, որ Դաղ-Մուրադ-շահին մէ տղայ ա հէլէ, խինգ տարեկան ա, քսան տարեկան տղի գէ-րայ ա: Միտք արին, որ էթան զողնան բէրին, անեն յիրանց թագաւորին տղայ, բէղնայ՝ էթայ յիրան խօր թագաւո-րութենը վերջացնայ, յետնայ յիրանը փջացնեն, թագաւորութե-նը մնայ յիրանցը: Էտ օր փուջ (վիճակ) կըցեն, կհնգնի մէ դևի գլխի. էն օրն ա, որ Այարէ-շար-փանջը տարեր ա ման տալու:

Դեր գնաց, տէսաւ, որ կայնուկ ա տղէն, փահլէվանը գա-ցեր ա ծաղիկ քաղելու: որ բէրայ տղի խամար: Դեր վէրցեց տղին ու գնաց: Այարէ-շար-փանջը էկաւ տէսաւ, որ տղէն չկայ: Դոր ման էկաւ՝ չգթաւ: Գնաց թագաւորին ասաւ. Տղէն չկայ: Թագաւորն ասաւ. Դու սաղ հնես. դու Աստծուց ուզիր, դու էլ կուրցրիր: Էտենց թագաւորը շիւտ մնաց:

Տղին որ դեր տարաւ, իմալ յիրան խէրն էր պախում՝ է-նենց էլ դեւերն ին պախում: Օրէն մէկը տանում ա՝ ման ա տա-լում, յիւկուն բէրում ա տուն: Մնաց չունք տղէն հէլաւ քսան տարեկան: Օրերից մէ օր դօրը էկաւ էն դիւին, որ գողցեր էր, բէրէր էր: Ասաւ տղին գնաց ման գալու. խասան մէ ծովի դրադ: Ղահրամանի-ղաթըլը յիշկեց ջրի մէջը՝ յիրան յուանգը ու դիւի՝ տէսաւ, որ յինքը ընդոնցից չէ: Ասաւ. Դե, ես ձեզնից չեմ, յա-րի՝ սաղն ասա: Դեր ասաւ. Դու մեր թագաւորի տղէն ես: Ա-սաւ. Չէ, ես ձեր թագաւորի տղէն չեմ. դիզն ասա, թէ չէ՝ կը-թալեմ ծովը: Ասաւ. Հնչիս թալում ծովը. թող, սաղն ասեմ: Ա-սաւ. դու խթամ-շահար քաղաքի Դաղ-Մուրադ-շահ թագաւորի տղէն ես. ես էկայ քեզի գողցայ բէրի. հիմի դու գիցի: Ղահրա-մանի-ղաթըլը ասաւ. Դէ, դու գնա, Աստուած քո բանն յաշողա: ես կէթամ: Դեր դարցաւ: Ղահրամանի-ղաթըլը գնաց, ճամփէն կուրցրեց, գնաց հնգաւ մէ դալին (խիտ) մէշա, ընդե մնաց: Մէշի մէջը յիրան ջանի մազը յիրանը ծածկեց, հէլաւ մէ ջանա-վար: Մէ ութ գետզանոց գէրան կտրեց, արաւ յիրան ձեռաց փէտ: Էտ փէտով աւուղուշ էր անում, էփում՝ ուտում էր: Օրե-րից մէ օր տէսաւ, որ մէ ջանաւար գէմ ա արե յիրանը, գալում ա: Ասաւ. Էս գազանը ընծի կփջացնայ: Տէր Աստուած, իմմլ անեմ: Էտ ջանաւարն էկաւ մօտըցաւ, Ղահրամանի-ղաթըլը տէ-սաւ, որ էտու գլխի վրէն մէ կոտորչ կայ տնդուկ. միտք արաւ,—

խեղճ կալենմ գիլաշ, տէնամ—խնչ գլնի, Զանաւարը էկաւ խա-
սաւ, Ղահրամանի—դաթըլը խեղճ կալաւ գիլաշ. շատ տրօրուան,
էտ ջանաւարի վիզը օլընց, դրեց տակը: Զանաւարը տկանց
դռաց: Ասաւ. էսի ընձի մեղայ էկաւ, թողնմ: Դիւի կոտորը կոտ-
րեց, թողեց, հէլաւ վեր, արաւ յիրան խամար ձի, ծառի կլպը-
ներից շրիդ օլընց, դրեց վիզը: Էտ ջանաւարը քարդատան էր^{*)},
էս խեղճ դոր որ էթում էր՝ խէձնում էր, դարէշըշմատը (ձեռնա-
փայտը) գնում էր գիրկը, էթում էր աւուղուշ:

Օրերից մէ օր գնաց մէշի մէշը աւուղուշ անելու: Յետ դար-
ցաւ էկաւ, տէսաւ, որ յիրան կրակը հնցել էր: Յիշկեց էս կողը
էն կողը, տէսաւ՝ զաղը տեղից կրակ ա էրէւում. Հէլաւ խէձաւ
բարգաղանը, դարէշըշմատը առաւ ձեռը, գրտնքիւղ գնաց խա-
սաւ կրակին, յիշաւ ձիանից, ոչ բարեւ, ոչ բարի լուս տուեց. մէ
կպուկ փոթուկ վէրցեց ու խէձաւ ձինը, դարէշըշմատն էլ առաւ
ձեռը, էկաւ խասաւ չունք սութալ-մութալների կուշտը (խա-
ժումամ): Հու արին, բու արին, խող թալին, կրակ թալին
Ղահրամանի—դաթըլի վրէն: Էսի հերսոտաւ, դարէշըշմատը շփըր-
տեց, մէ էրկու իրեք խարիր ջան ըսպանուան, մնացածը փա-
խան: Յինքը խէձաւ յիրան ձինը ու էկաւ յիրան տեղը, կրակ
արաւ, զաղ էփեց, կէրաւ, պրծաւ, լուսը բացուաւ, տէսաւ, որ
էտ զօշունը գալում ա—էթում ա. հէլաւ, թեւ տուեց մէ ծառի,
կայնաւ, թամաշայ ա անում. յառչի մարդիքը էկան հնցան. յիդի
մարդիքը որ էկան՝ էտու վրէն թառանայ արին (հեզնեցին),
ծղղացին, մաղերը քաշին: Էտի հերսոտաւ, ծառը քօքախան արաւ
ու տուեց էտոնցը ջարթ ու խուրդ արաւ՝ չունքի տաղլին խասաւ
էն յառչի մարդիքին: Յետ դարցան, ձեռուլ արին, կայնաւ:

Էտոնք Դադ-Մուրադ-շահի զօշունն ին, որ Ղահրաման-դա-
թըլին ին ման գալում: Ֆէրըզ փահլէվանը տասնէրկու լիզու
կարթալ էր գիւում. ինչ լիզու խօսաց՝ չխօսաց: Որ դիւի լիզու
խօսաց՝ էտ մարդը խօսաց: Ասաւ. Դու ի՞նչ մարդ ես Ասաւ. Ես
Խաթամ-շահարի թագաւորի տղէն եմ. դեկըր ընձի զոդցան տա-
րան, արին յիրանց թագաւորին տղայ, որ բէգընի՝ էթի իմ խօր
թագաւորութենը վերջացնի, յետնայ ընձի փջացնին, թագաւո-
րութենը մնէր յիրանցը: Ես էլ որ յիմցայ՝ թողի էկայ. ճամփէն
շշկոայ, մացի էս մէշի մէշը ու մացի: Այարէ-շար-փանջ փահլէ-
վանը առաւ. Մենք քեզի ենք ման գալում: Էն սնաթին դալլաք

*) Քարդատանը մի շատ զօրեղ կենդանի է. որ փղին խփում վերքնում
է իւր եղիւրդի վրայ. ուր մնալուց յետ՝ ճարպը հալում է, լցւում՝ որա տըքը՝
և սպանում:

բերին, մաղը խողին, մէ ձեռք շոր խաբցրին, մէ լաւ ձի խէձաւ ու էտանց խետ ճամփայ հնգաւ:

Այարէ-շար-փանջ փահլէվանն ասաւ. Ղահրամանի-ղաթըլ ջան, դիտան թնչ կայ: Ասաւ. Ի՞նչ կայ: Չարխէ-գարդեան-գէժ քաղաք կայ: Ընդոնք տասնըչորս տարի ա, որ խարջ չի տուած. քո խօրքուրը ու Քամարէ-քեափուն, որ ձեր թագաւորութենը ընդու վրայ ա, էթանք բերենք: Ասաւ. Լաւ ես ասում, էթանք, ու գացին: Ասաւ. Ընդոնց վրէն որ չենք կանուժ—չարխն ա պախում. իշտա որ լաւ օր հլնի, տէնան, որ դօշուն էկաւ՝ չարխը կկապեն, թողն ու դումանը քաղաքը կծածկայ. էլ մարդ չի կանայ էթայ քաղքի բոլորը: Ղահրամանի-ղաթըլը ասաւ. Որ էնենց ա՝ չարխը պտի ախանք:

Գացին չունքի քաղքի կուշտը: Էա քաղքի մարդիքը չարխը թողին, առաւ թող դուման անի՝ քաղաքն էլ չէրէաց: Ղահրամանի-ղաթըլը ասաւ. Այարէ-շար-փանջ, վէրցն խեղդ վեց բալթալի (տապարաւոր), էթանք գըլա չարխը, ու գացին: Խասան չարխի կուշտը: Իրեք բալթալին մէ եանը կայնըցրեց, իրեքն էլ՝ մէ եանը, ու գօշը տուեց դեմը: Մէկ ճոճոցրեց՝ չկարցաւ կայնըցնէր. չարխը աղին թալեց, հնգաւ պալից: Այարէ-շար-փանջ փահլէվանը ասաւ. Էս թնչ բան էր՝ ես արեցի. անշախ որ գթէրի, տանի տի թագաւորին, յետի յինքը գիտէր ինչ կանէր. էլ ուժուդ չկայ, որ սաղ մնայ: Էնենց փօր ու փոշման թողեց զնաց:

Ճէրըզ փահլէվանն ասաւ. Ի՞նչ արիք: Ասաւ. Չարխը աղին թալեց: Թօ էտոնք էտե մնան, մենք դառնանք գըլա Ղահրամանի-ղաթըլը: Իմալ որ չարխը կթալայ՝ աղի ոտը կնգնի քարի ջափէն, էնենց կմնայ կախ: Մէկ էլ կտէնայ, որ մէկը ասում ա. Ձեռդ տօնը ընձի: Ասաւ. Չիմ տայ. տամ որ քաշես, ոտս պրծըցնես՝ հնգնեմ մեռնեմ: Ասաւ. Չէ, ես բօզ ձիաւոր սուրբ Սարքիսն եմ. քեզի խասա: Ձեռը տուեց, քաշեց խանց:

Ղահրամանի-ղաթըլը հէլա զնաց դօշունի կուշտը. մտաւ Այարէ-շար-փանջ փահլէվանի չադրը, ասաւ. Բար-աչոզում քեզի վնյ, ասաւ, բարո՞վ, խազար բարո՞վ էկար: Դէհ, ասաւ, էլ մի նստի. հէլի վերցն տասնէրկու բալթալի ու էթանք: Գացին էլի խասան չարխին: Վեցը մէ եանը կայնան, վեցն էլ մէ եանը: Ղահրամանի-ղաթըլը գօշը տուեց դեմ, զանչեց՝ բօզ ձիաւոր սուրբ Սարքիս, ու ճոճոցն հնգաւ չարխին: Չունք չոքերը խըթուաւ չոր գէտին, չարխը կայնըցրեց: Ասաւ. Ջարթէք: Ջարթին, արին վառելիք: Որ չարխը ջարթին պրծան, թողն ու դումանը քաշուաւ, արեն ասաւ, դօշունը մտաւ քաղքի մէջը. տասնըչորս

տարուայ խարջի տեղակ քսանութ տարուայ ժողովին: Ղահրամանի-ղաթըլը զնաց մաղազի դուռը բացեց, մտաւ ներս, դուռ խանեց խօրքուրին ու Քամարէ-քեաֆուն (մորթի), ու քառսուն դարավաշով էնտեղից էկաւ մէ յուրիշ քաղաք:

Էա քաղքի թագաւորը ախիկ էր: Խաբարը զնաց թագաւորին, ասին, թէ Ղահրամանի-ղաթըլը էկեր ա՛ խարջ ժողովելու: Ասաւ. Գացէք ասէք ընդուն, թէ ընձի՝ «յինքն բոլոր» մէջը ծակ պըտուկ» կասեն, ես խարջ չեմ տայ, կկռուեմ: Սարախտանը (առաւօտը) մտան մէյդան. շատն ու քիչը Աստուած գիտայ՝ իշտա կռուան: Ղահրամանի-ղաթըլը ղոռկի վրէն (մէջքից բռնած, գլխի վրայ ձգել) տփեց գէտին, թուրը քաշեց, որ վիզը կտէր, թագաւորը ծծեբը թալեց դուռ, ասաւ. Ընձի մի սպանա, ես ախիկ եմ, քեզի կռնեմ: Ընձնից ու քեզնից որ տղայ հնի՝ սաղ յերգիրը քաֆ ու քուն կանայ: Ձեռնէն բռնեց, խանեց կայնցրեց, ու առան ջարթ ու խուրդ անել, բիրդան դեբրի քոքը կտրին:

Ջուղարը զնաց Դադ-Մուրադ-շահ թագաւորին, թէ՛ Այարէշար-փանջ փահլէվանը Ղահրամանի-ղաթըլին գթեր ա, Չարխէ-գեարդան-գէժ քաղաքն աւիրեր ա, խօրքուրն ու Քամարէ-քեաֆուն բէրեր ա, էն ախիկ թագաւորն էլ առե յիրան կնիկ: Դադ-Մուրադ-շահն ուրախութենով հէլաւ զնաց տղի յառէյը, բէրեց, օխան օր, օխտը գիշեր խառնիս արաւ: Էնի խասաւ յիր մուրազին, դուք էլ խասնէք ձեր մուրազին: